

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԴԵՊՔԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՎՋԵԲ-Ի ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

[2019 թ. ապրիլի 25-ը]

Բովանդակություն

ԲԱԺԻՆ I: ՆՊԱՏԱԿ3

ԲԱԺԻՆ II: ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ3

ԲԱԺԻՆ III: ՇՐՋԱՆԱԿ.....5

ԲԱԺԻՆ IV: ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ..... 16

ԲԱԺԻՆ V: ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ..... 16

ԲԱԺԻՆ VI: ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ..... 16

ԲԱԺԻՆ VII: ՀԱՐԱԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 16

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Դեպքերի քննությունը

ՎՋԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության քաղաքականության շրջանակներում

Բաժին I. Նպատակ

Սույն փաստաթղթի նպատակն է. ուղեցույց տրամադրել Ծրագրերի հաշվետվողականության քաղաքականության (այսուհետ՝ Քաղաքականություն) իրականացման համար և լրացուցիչ տեղեկություն տրամադրել առ այն, թե ինչպես պետք է Ծրագրի հաշվետվողականության անկախ մեխանիզմը (ՕՀԱՍ) ստացված Դիմումների սրբինինգ անի, քննի Դեպքերը և իրականացնի իր մանդատի շրջանակներում գտնվող այլ գործառույթները:

ՕՀԱՍ-ը հանձն է առել աջակցել շահագրգիռ կողմերին՝ անցնելու Դեպքի քննության գործընթացի տարբեր փուլերը:

Բաժին II. Սահմանումներ

Սույն Ուղեցույցի մեջ օգտագործված եզրույթներն ունեն այն նույն իմաստները, որոնք սահմանվել են «Քաղաքականության» փաստաթղթում:

Մասնավորապես՝

- ա) «Ծրագիր» եզրույթը հղումներ է պարունակում Ծրագրի «հաստատմանը»:
Բանկի կողմից ներկայացված ներդրումները հաստատելու համար պատասխանատու մարմինը Խորհուրդն է: Այդուհանդերձ, Խորհուրդը կարող է այդ լիազորությունը հանձնել համապատասխան պայմաններին բավարարող՝ Բանկի կազմում գործող հանձնաժողովի: Քաղաքականության

մեջ Ծրագրի «հաստատմանը» վերաբերող հղումը պետք է դիտարկվի որպես առաջարկվող ներդրումների վերաբերյալ կայացված վերջնական որոշում՝ ՎԶԵԲ-ի իրավասու մարմնի կողմից, լինի դա Խորհուրդը կամ, կախված դեպքից, Բանկի ղեկավարության կազմում գործող մեկ այլ մարմին կամ հանձնաժողով, որին Խորհուրդը փոխանցել է Ծրագրի նկատմամբ ունեցած՝ իր լիազորությունները:

- բ) «Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն» եզրույթը ենթադրում է ցանկացած հարակից Հրահանգի ներառում (այսինքն՝ Բանկին առնչվող տեղեկության հրապարակման հետ կապված՝ Բանկի նախագահի կողմից տրված ցանկացած Հրահանգ՝ Տեղեկությունների հասանելիության քաղաքականության դրույթներին համապատասխան), ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխություններով հանդերձ: Քաղաքականության 2.6 պարբերության համաձայն, Համապատասխանության գնատումը կարող է գնահատել, արդյոք Բանկը պահպանել է Տեղեկությունների հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին ներհատուկ դրույթների կամ ցանկացած այլ հարակից Հրահանգների հետ համապատասխանությունը, իսկ Քաղաքականության պարբերություն 2.7-ի համաձայն Համապատասխանության ստուգման հանձնաժողովը սահմանելու է, արդյոք Բանկը ձախողվել է Տեղեկությունների հասանելիության քաղաքականությամբ սահմանվող՝ Ծրագրին ներհատուկ դրույթների կամ հարակից ցանկացած այլ Հրահանգի հետ համապատասխանությունը պահպանելու հարցում:

Բաժին III. Շրջանակ

ԴԵՊՔԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

1. Դիմումի ներկայացում

1.1 Ով կարող է **Դիմում ներկայացնել**. ԾՀԱՄ-ն ընդունում է, որ ուղղակիորեն կամ անհատապես Ծրագրի ազդակիր անձ չհանդիսացող Կազմակերպությունների կողմից ներկայացվող Դիմումները կարող են վերաբերել բացառապես բանպահպանական խնդիրների, որտեղ առկա չեն Ծրագրի ազդակիր անձինք (օրինակ՝ եթե մտահոգությունները վերաբերում են կենսաբազմազանության պահպանմանը հեռավոր տարածքներում, որտեղ տեղի կամ տարածաշրջանի բնակչությունը հող կամ ռեսուրսներ չի օգտագործում): Նման դեպքերում Կազմակերպությունները կարող են, համաձայն Քաղաքականության 2 գ)vi) պարբերության, տեղեկություն տրամադրել այդ առնչությամբ, որպեսզի ԾՀԱՄ-ը հրաժարվի այն պահանջից, ըստ որի Կազմակերպությունները պետք է ապացուցեն, որ մինչ Դիմում ներկայացնելը վերջինները փոխգործակցել են Ծրագրի ազդակիր անձանց հետ:

1.2 **Պարզաբանումներ Դիմումի ներկայացման վերաբերյալ**. Ցանկացած անձ կամ Կազմակերպություն կարող է Դիմումը մշակելուց և ներկայացնելուց առաջ կապ հաստատել ԾՀԱՄ-ի հետ՝ Դեպքերի քննության գործընթացի վերաբերյալ հստակեցումներ պահանջելու նպատակով: ԾՀԱՄ-ը կարող է տեղեկություն տրամադրել ԾՀԱՄ-ի մոտեցումների և ընթացակարգերի վերաբերյալ և բացատրել ԾՀԱՄ-ի Քաղաքականության և Ուղեցույցի դրույթները՝ առանց Դիմումի բովանդակության վերաբերյալ խորհրդատվություն տալու: Ըստ շահագրգիռ կողմի ցանկության, ԾՀԱՄ-ը կարող է տեղեկություն տրամադրել գաղտնիության հիմունքներով: ԾՀԱՄ-ի հետ կարելի է կապ հաստատել ստորև նշված էլեկտրոնային հասցեով, ֆաքսով, փոստային հասցեով կամ հեռախոսահամարով: Այն դեպքերում, երբ

միջազգային զանգեր չեն կարող իրականացվել, ԾՀԱՄ-ը նույնպես կարող է Հարցման հիման վրա, զանգահարել շահագրգիռ անհատներին կամ Կազմակերպություններին: Դիմումը ներկայացնելուց հետո, եթե առկա են բացթողումներ, ԾՀԱՄ-ը կարող է նաև Դիմումատուների հետ քննարկել այդ բացթողումները, ըստ անհրաժեշտության, մասնավորապես՝ թե ինչ փոփոխություններ են անհրաժեշտ Դիմումն ամբողջական դարձնելու համար, ըստ Քաղաքականության պարբերություն 2.2 գ)-ի: Բացի այդ, ԾՀԱՄ-ի կայքում հասանելի են նաև ԾՀԱՄ-ի գործընթացն ամփոփող հրապարակումներ:

Էլ-փոստ՝ ipam@ebrd.com

Հեռախոս՝ +44 7881013976

Ֆաքս՝ +44 20 7338 7633

Հասցե՝

Independent Project Accountability Mechanism

European Bank for Reconstruction and Development

One Exchange Square

London

United Kingdom

EC2A 2JN

1.3 Դիմումատուի ներկայացուցիչները. Ներկայացուցիչը կարող է աջակցել Դիմումատուին Դեպքի քննության ողջ ընթացքում: Այդուհանդերձ, կասկածներից զերծ մնալու նպատակով, Դիմումատուներին իրավունք է վերապահվում ցանկացած պահի փոփոխություններ կատարել ներկայացուցչության լիազորագրում (այսինքն, ցանկության դեպքում նրանք կարող են շարունակել Դիմումի կամ Դեպքի կարգավորման ընթացքն առանց Ներկայացուցչի):

1. 4 Գաղտնիություն և անձի ինքնության պաշտպանություն: Այն դեպքերում, երբ գաղտնիության ապահովումը հստակ կերպով սահմանվում է Քաղաքականության 2.2գ)ii. պարբերությամբ, ԾՀԱՄ-ը ա) չի հրապարակի Դիմումատուների ինքնության հետ կապված որևէ տեղեկություն այլ կողմերին՝ բանավոր կամ այլ ձևով, և բ) կվերախմբագրի Դիմումից և ԾՀԱՄ-ի զեկույցներից ստացված համապատասխան տեղեկությունները՝ այս մեթոդի միջոցով իրականացվելով Դիմումատուների ինքնության պաշտպանությունը: Դիմումատուների ինքնության պաշտպանության նպատակով կարող են կիրառվել նաև այլ մեթոդներ, ինչպիսիք են, օրինակ՝ անվտանգ էլեկտրոնային փոստի, հեռախոսահամարի և կոնֆերանս-տեսազանգերի գործիքների կիրառումը, Դիմումատուների հետ տեղայց կատարելու նկատմամբ կիրառվող մոտեցումների համակարգումը, համապատասխան ցանկացած կողմի հետ հանդիպումների ձայնագրման արգելքը, միջնորդական դիվանագիտությունը և այլ մեթոդներ, որոնք նպատակահարմար են ԾՀԱՄ-ի Ղեկավարի և Դիմումատուների տեսակետից:

1. 5 Տվյալների տրամադրում. ԾՀԱՄ-ն ընդունում է, որ Ծրագրի ոչ բոլոր շահագրգիռ կողմերի համար կարող են միևնույն մակարդակով հասանելի լինել Ծրագրի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները: Դեպքի քննության ամբողջ ընթացքում ԾՀԱՄ-ը կիրառելու է *prima facie* (*լատիարգմանաբար՝ առերևույթ*) մոտեցումը, ինչը նշանակում է, որ Մեխանիզմը Դիմումատուների կողմից տրամադրված տեղեկատվությունն ընդունելու է որպես հավաստի, քանի դեռ չի ապացուցվել հակառակը:

1. 6 Գրանցման ժամանակ ԾՀԱՄ-ի գործառույթներից մեկի նախապատվության ճանաչումը: Դիմումատուներից ու նրանց ներկայացուցիչներից չի պահանջվում ծանոթ լինել կամ պատշաճ պատկերացում ունենալ ԾՀԱՄ-ի՝ Դեպքերի կարգավորման երկու

գործառույթների (այսինքն՝ Խնդիրների լուծման գործառույթի և Համապատասխանության ստուգման գործառույթի) մասին: Որպես գնահատման փուլի մի մաս, ԾՀԱՄ-ի աշխատակազմը կբացատրի Խնդիրների լուծման և Համապատասխանության ստուգման գործառույթների բնութագրերը, մոտեցումները, գործողություններն ու հնարավոր արդյունքները Դիմումի ներկայացման և գրանցման գործընթացներից հետո:

2 Գրանցում

2. 1 Քաղաքականության 2.2գ) պարբերության մեջ նշված ոչ մի դրույթ չի կարող սահմանափակել ԾՀԱՄ-ի մանդատն առ այն, որ Համապատասխանության ստուգման և Խնդիրների լուծման նախաձեռնության շրջանակներում ԾՀԱՄ-ը կարող է քննել այնպիսի Դիմումներ, որոնք առնչվում են Բանկի ֆինանսական միջնորդության ծրագրերին, Բնապահպանական և սոցիալական քաղաքականության շրջանակներում Հաճախորդների՝ ֆինանսական միջնորդության հետ կապված պարտավորություններին, Հաճախորդի անունից հանդես եկող երրորդ կողմի գործողություններին կամ Ծրագրի իրագործման հետ կապված այլ ասպեկտների կատարմանը (օրինակ՝ անվտանգության մասնավոր ուժեր, կապալառուներ կամ խորհրդատուներ), կամ վերաբերվում են ցանկացած այլ՝ երրորդ դերակատարի գործողություններին, ով Ծրագրի իրականացման հետ կապված գտնվում է Բանկի վերահսկողության ներքո կամ պաշտոնական հարաբերությունների մեջ է Բանկի կամ Հախաճորդի հետ:

2. 2 ԾՀԱՄ-ի մանդատը թույլ է տալիս քննել բնապահպանական, սոցիալական և թափանցիկությանն առնչվող հիմնահարցերը, որոնք ներառված են բացառապես Բնապահպանական և սոցիալական

քաղաքականության մեջ և Տեղեկությունների հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին ներհատուկ դրույթներում: Այնուամենայնիվ, Բանկի կազմում գործող այլ գրասենյակներ և վարչություններ համապարփակ ձևով լուծում են ԾՀԱՄ-ում գրանցման իրավունք չունեցող խնդիրները, ինչպես նկարագրված է Քաղաքականության 2.2գ) պարբերության մեջ:

ա) Համապատասխանության ապահովման հարցերով Գլխավոր տնօրենի գրասենյակը պատասխանատու է խարդախության, կոռուպցիայի և չարաշահումների հետ կապված խնդիրների կարգավորման համար: ՎՋԵԲ-ի՝ Համապատասխանության ապահովման գործառույթի մասին տեղեկությունը կարելի է գտնել հետևյալ հղմամբ. <https://www.ebrd.com/who-we-are/our-values/investigating-fraud-and-corruption.html>: Հարցերը կարող են ուղարկվել հետևյալ էլ-հասցեով. compliance@ebrd.com:

բ) Գնումների քաղաքականության և Խորհրդատվության վարչությունը պատասխանատու է գնումների հետ կապված բողոքների կարգավորման համար: Գնումների բողոքարկման գործընթացների և բողոք ներկայացնելու իրավանքի վերաբերյալ տեղեկությունը, ինչպես նաև ՎՋԵԲ-ի՝ գնումների բողոքարկման ձևաթուղթը կարելի է գտնել հետևյալ հղմամբ. <https://www.ebrd.com/work-with-us/procurement/project-procurement-complaints.html>. Բողոքները կարող են ներկայացվել հետևյալ էլ-հասցեով. ProcurementComplaint@ebrd.com:

գ) Հարցերն ու մտահոգությունները, որոնք դուրս են մնում այս հիմնական ոլորտների շրջանակներից, կարելի է ուղարկել ՎՋԵԲ-ի՝ Քաղաքացիական հասարակության ներգարվածության բաժին

հետևյալ հղմամբ. cso@ebrd.com: ՎՋԵԲ-ի կողմից իրականացվող գործընթացներում հասարակությանը ներգարվելու հնարավորությունների վերաբերյալ տեղեկությունը հասանելի է հետևյալ հղմամբ. <https://www.ebrd.com/who-we-are/civil-society-engagement/contact.html>:

2.3 Դիմումի կասեցում

2.3.1 Գրանցման գործընթացի ժամանակ ԾՀԱՄ-ը սովորաբար խորհրդակցություններ է անցկացնում Դիմումատուների հետ՝ Դիմումը և դրա հիմքում ընկած խնդիրներն պատշաճ կերպով հասկանալու նպատակով, և որոշում է, արդյոք առկա են Դիմումի անավարտ լինելուն նպաստող և շտկման ենթակա որոշակի թերություններ:

2.3.2 Եթե Դիմումը կասեցվել է և, հետևաբար, փակվել Քաղաքականության 2.2 գ) պարբերությամբ սահմանված անավարտության պատճառով (այդ թվում՝ Դիմումի մեջ առկա թերությունները Քաղաքականության 2.2 գ) պարբերությամբ սահմանված ժամկետներում շտկելու ձախողման արդյունքում), դա չի կարող խոչընդոտ հանդիսանալ Դիմումատուների համար՝ հետագայում ևս մեկ անգամ իրենց Դիմումը ներկայացնելու, եթե Դիմումն ամբողջական տեսքով ներկայացնելու նպատակով ներառվել են Քաղաքականությամբ պահանջվող լրացուցիչ տեղեկությունները:

2.4 Վերջնարդյունքներ. ԾՀԱՄ-ի կողմից Դիմումի Գրանցումը վարչական քայլ է և այն հաստատում է, որ Դիմումը բավարարում է Քաղաքականության 2.2 պարբերությամբ սահմանված՝ Գրանցման չափորոշիչներին: Անհրաժեշտ է հստակեցնել, որ Դիմումի Գրանցումը

դեռևս չի ենթադրում եզրակացություններ Դիմումի բովանդակային արժանիքների, ճմարտացիություն կամ ճշգրտության վերաբերյալ:

3 Գնահատում

3.1 Վերջնարդյունքներ. ԾՀԱՄ-ի կողմից Դիմումի Գնահատման գործընթացը վարչական քայլ է՝ ուղղված Կողմերի՝ յուրաքանչյուր գործառույթի մեջ ներգրավված լինելու պատրաստակամության գնահատմանը և այդ գործառույթներից մեկն ընտրելու վերաբերյալ որոշումների կայացմանը: Անհրաժեշտ է հստակեցնել, որ Դիմումի Գնահատումը դեռևս չի ենթադրում եզրակացություններ Դիմումի բովանդակային արժանիքների, ճմարտացիություն կամ ճշգրտության վերաբերյալ:

4 Խնդիրների լուծում

4.1 Մոտեցումներ. Կողմերի միջև ծագած հարցերին Խնդիրների լուծման գործառույթի միջոցով լուծում տալու նպատակով կարող են կիրառվել մի շարք մոտեցումներ: ԾՀԱՄ-ը Կողմերի հետ խորհրդակցության արդյունքում ընտրելու է այնպիսի մոտեցումներ, որոնք կարող են ներառել .

ա) *Ղյուրացում և տեղեկությունների փոխանակում.* Շատ դեպքերում Դիմումը կարող է հարցեր առաջացնել Ծրագրի ընթացիկ կամ ակնկալվող ազդեցությունների վերաբերյալ: Տեղեկությունների փոխանակման գործընթացի ղյուրացումը հնարավորություն կընձեռի Դիմումատուներին տեղեկություն կամ հստակեցումներ ստանալ դրանց վերաբերյալ, ինչն էլ կհանգեցնի մտահոգությունների չեզոքացմանը:

բ) *Միջնորդություն կամ հաշտեցում.* Միջնորդությունը ենթադրում է վեճի մեջ երրորդ, չեզոք կողմի միջամտությունը՝ աջակցելու Կողմերին,

որպեսզի նրանք կամավոր կերպով հասնեն փոխշահավետ համաձայնությա:

Որպես այլընտրանքային միջոց՝ Հաշտեցման գործընթացում չեզոք երրորդ կողմը կարող է նաև, որպես գործընթացի մաս, առաջարկություններ ներկայացնել Կողմերին:

զ) **Համատեղ փաստահավաք.** Այն դեպքերում, երբ Ծրագրին առնչվող փաստերի վերաբերյալ առկա է անորոշություն, Կողմերը կարող են որպես պատշաճ մոտեցում ընտրել համատեղ փաստահավաք նախաձեռնելու մասին որոշումը: Կողմերը համատեղ որոշում կկայացնեն քննության ենթակա խնդիրների և այդ քննության ընթացքում մեթոդների, ռեսուրսների և իրականացնող անձանց վերաբերյալ: Կողմերը նաև համաձայնություն ձեռք կբերեն այն հարցի շուրջ, թե ինչպես պետք է վերջինների կողմից օգտագործվի համատեղ փաստահավաքի արդյունքում գոյացած տեղեկությունը:

դ) **Երկխոսություն և աջակցվող բանակցություններ:** Այն դեպքերում, երբ Կողմերի միջև երկխոսությունը սահմանափակ է կամ ընդհատվել է, ԾՀԱՄ-ը կարող է խրախուսել Կողմերին ուղիղ երկխոսություն և բանակցություններ սկսել՝ Դիմումի մեջ բարձրացված խնդիրներին անդրադառնալու և դրանց լուծում տալու նպատակով: Կողմերին այս հարցում աջակցելու նպատակով ԾՀԱՄ-ը կարող է առաջարկել կարողությունների զարգացման և/կամ փորձի փոխանակման միջոցառումներ:

4.2 Խնդիրների լուծման համար համապատասխան խորհրդատուների ընտրություն. Խնդիրների լուծման գործընթացները կարող են ղեկավարվել ուղղակիորեն ԾՀԱՄ-ի կողմից կամ իրականացվել խորհրդատուների աջակցությամբ: Խնդիրների լուծման նախաձեռնություններն արդյունավետորեն

իրականացնելու նպատակով ԾՀԱՄ-ը փորձելու է ներգրավել տեղացի և տարածաշրջանում բնակվող միջորդների, դասընթացավարների և թարգմանիչների, ովքեր ունեն համապատասխան որակավորումներ և լեզվաբանական ու մշակութային գիտելիքներ:

4.3 Համապատասխանության ապահովման խորհրդատուների ընտրություն.

Համապատասխանության գնահատման և ստուգման գործողություններն անմիջականորեն ղեկավարվում են ԾՀԱՄ-ի կողմից. այնուամենայնիվ, ԾՀԱՄ-ին այդ հարցում կարող են աջակցել նաև խորհրդատուները: ԾՀԱՄ-ն այս գործընթացում ներառելու է համապատասխան որակավորումներ ունեցող մասնագետների՝ Համապատասխանության ստուգման կոնկրետ ոլորտի հետ կապված աշխատանքներն արդյունավետ կերպով իրականացնելու նպատակով:

4.4 Խնդիրների լուծման վերջնարդյունքերը. Ի հավելումն Խնդիրների լուծման՝ 2.4 i., ii. և iii. պարբերություններում նշված արդյունքների՝ 2.4 ե) iv պարբերությունը հաստատում է, որ Ծրագրին ներհատուկ ինստիտուցիոնալ փորձն ու առաջարկությունները ղեկավարությանն են փոխանցվում ոչ միայն Համապատասխանության գործառույթի միջոցով, այլև Խնդիրների լուծման փուլի ավարտից հետո և/կամ դրա ընթացքում: ԾՀԱՄ-ը պաշտոնական կերպով հետադարձ կապ կապահովի Բանկի ղեկավարության հետ Խնդիրների լուծման վերաբերյալ՝ երկու գործառույթների համար ստեղծելով հետադարձ կապի ապահովման օղակ: Տրամադրվող ցանկացած հետադարձ կապ պետք է համապատասխանի Դեպքի մասով սահմանվող գաղտնիության պահանջներին ու սահմանափակումներին:

5 Համապատասխանության գնահատում

5.1 Ուղղակի, անուղղակի և նյութական վնասի գնահատում: Քաղաքականության 2.6 պարբերության համաձայն՝ գնահատումն առ այն, թե արդյոք Ծրագիրը կարող էր կամ կարող է ուղղակի, անուղղակի կամ նյութական վնաս պատճառել, ներառում է (բայց չի սահմանափակվում) Ծրագրի ազդեցության (ազդեցությունների) կամ

հնարավոր ազդեցության (ազդեցությունների) (ինչպես որ ներկայացված է Դիմումի մեջ) ուղղվածության, ուժգնության, աշխարհագրական ընդգրկվածության, տևողության, հետադարձելիության, հաճախականության և հավանականության գնահատում:

6 Դեպքի քննության ընդհանուր դրույթներ

6.1 Տեղայցեր. ԾՀԱՄ-ը՝ Կողմերի հետ միասին կծրագրավորի տեղայցերը: Կողմերը կստանան խորհրդատվություն և կիրավիրվեն սեփական ներդրումն ունենալ տեղայցերի օրակարգի որոշման հարցում, մասնակիցների հետ հանդիպումներում, առողջության և անվտանգության հարցերի գնահատումներում և հաշվեհարդարի ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումներում՝ ըստ անհրաժեշտության: ԾՀԱՄ-ը տեղեկություն կտրամադրի տեղայցերի և դրանց ներգրավված լինելու համար անհրաժեշտ համարվող «հիմնարար կանոնների» և պայմանների վերաբերյալ:

6. 2 Հ ա շ վ ե հ ա ր դ ա ր . ԾՀԱՄ-ի՝ հաշվեհարդարի վերաբերյալ գործընթացները նախատեսում են գաղտնիության պահպանում, ռիսկերի գնահատում, ռիսկերի մեղմացում և մոնիթորինգ: Իրագործելիության սահմաններում, ԾՀԱՄ-ը հաշվեհարդարի ռիսկերի գնահատման և այդ ռիսկերի մեղմացմանն ուղղված գործողությունների իրականացման ժամանակ խորհրդակցելու է Դիմումատուների (և նրանց Ներկայացուցիչների, եթե այդպիսիք կան) հետ, որպեսզի առկա մտահոգությունների կարգավորման ժամանակ հնարավոր լինի համապատասխան մոտեցումներ ցուցաբերել՝ հնարավորինս հաշվի առնելով յուրաքանչյուր Դեպքի բովանդակային ենթատեքստերը:

Եթե ԾՀԱՄ-ի Դեպքի մեջ ընդգրկված որևէ անձի նկատմամբ իրականացվում են հաշվեհարդարի որևէ գործողություններ, վերջիններն այդ մասին պետք է անմիջապես հաղորդեն ԾՀԱՄ-ին հետևյալ միջոցներով.

- ա) ԾՀԱՄ-ի աշխատակազմը պիտի տեղեկացվի այն աշխատակցի(-կիցների) միջոցով, ում հետ նրանք գտնվում են կապի մեջ, եթե կան այդպիսիք,
- բ) ԾՀԱՄ-ի կոնտակտային տվյալների միջոցով (տե՛ս վերևում բերված Բաժին 1.2-ը) կամ ցանկացած այլ անվտանգ կապի միջոցով, որը նախընտրելի կլինի նրանց համար:

Եթե ԾՀԱՄ-ի աշխատակազմը տեղեկացվում է, որ տեղի է ունեցել հաշվեհարդարի միջադեպ, Մեխանիզմը զեկուցում է այդ մասին Բանկին՝ համաձայն ՎԶԵԲ-ի՝ Ներքին ուղեցույցների, որոնք վերաբերում են «Մեր ներդրումների հետ կապված քննադատության և բողոքների պատճառով հաշվեհարդար իրկանացնելու մեղադրանքների քննությանը»:

7 Իրազեկում և վերապատրաստում

7.1 Իրազեկման և վերապատրաստման կարիքներ. ԾՀԱՄ-ը ողջունում է անհատների, Կազմակերպությունների, Բանկի ղեկավարության և Հաճախորդների կարծիքները իրենց վերապատրաստումների, իրազեկման և կարողությունների զարգացման կարիքների վերաբերյալ: ԾՀԱՄ-ը խրախուսում է նաև կարծիքների փոխանակումը հաղորդակցման այն արդյունավետ հարթակներում, որոնց միջոցով հնարավոր է հասանելի դառնալ այն երկրներում, որտեղ Բանկը գործունեություն է ծավալում:

7.2 ԾՀԱՄ-ի մասին տեղեկացվածություն. Զարգացման հատուկ ծրագրերում ՎԶԵԲ-ի ներդրումների և ԾՀԱՄ-ի գործունեության և մանդատի վերաբերյալ հասարակության տեղեկացվածության խթանումը անհրաժեշտ տարրեր են ԾՀԱՄ-ի հասանելիությանը նպաստելու գործընթացում: Ծրագրի շահագրգիռ կողմերի ներգրավման պլաններն այժմ, որպես կանոն, ներառելու են Հաճախորդների այնպիսի պարտավորություններ, ինչպիսիք են. ՎԶԵԲ-ի կողմից Ծրագրին

տրամադրվող ֆինանսավորումը հասանելի կերպով շահագրգիռ կողմերին ներկայացնելը և ՎՋԵԲ-ի Քաղաքացիական հասարակության ներգրավվածության բաղադրիչի վերաբերյալ կոնտակտային տվյալներ տրամադրելը (cs@ebrd.com), որպեսզի, անհրաժեշտության դեպքում, խնդիրները քննարկվեն Բանկի ղեկավարության հետ: Քաղաքացիական հասարակության ներգրավվածության բաղադրիչը կարող է անհատներին և Կազմակերպություններին տեղեկացնել ԾՀԱՄ-ի գոյության մասին մասնավորապես այն դեպքերում, երբ շահագրգիռ կողմը նշում է, որ Ղեկավարության պատասխանը չի անդրադարձել իրենց կողմից բարձրաձայնած հարցերին:

Բաժին IV. Հրապարակում

Սույն Ուղեցույցը հրապարակվելու է ԾՀԱՄ-ի կայքում:

Բաժին V. Ուժի մեջ մտնելու ամսաթիվը

Սույն Ուղեցույցն ուժի մեջ է մտնում Քաղաքականության՝ ուժի մեջ մտնելու օրվանից:

Բաժին VI. Որոշումների կայացման շրջանակ

ԾՀԱՄ-ի Ղեկավարը հաշվետու է սույն Ուղեցույցի կիրարկման համար:

ԾՀԱՄ-ի Ղեկավարը պատասխանատու է սույն Ուղեցույցի կիրարկման համար:

Բաժին VII. Հարակից փաստաթղթեր

1. Ծրագրի հաշվետվողականության քաղաքականություն ՔԱՂ/2019/[]
2. Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն ՔԱՂ/2019/[]
3. Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն ՔԱՂ/2019/[...]

OFFICIAL USE

Պաշտոնական օգտագործման համար

OFFICIAL USE